

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԼՂՀ ԿԱ շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչության 2011թ. գործունեության մասին

1. Շրջակա միջավայրի պահպանության և բնական ռեսուրսների օգտագործման բնագավառում պետական քաղաքականության

Առաջնորդվելով ոլորտին վերաբերող օրենսդրական և այլ ենթաօրենսդրական ակտերով, ինչպես նաև ԼՂՀ կառավարության 2008թ. դեկտեմբերի 23-ի թիվ 931 որոշմամբ հաստատված ԼՂՀ ԿԱ շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչության կանոնադրության 9-րդ կետով՝ հիմնավորվել և ԼՂՀ կառավարության քննարկմանն են ներկայացվել հետևյալ 10 որոշման նախագծերը.

- « Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2011թ. պետական բյուջեով նախատեսված անտառային միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» որոշման նախագիծը.
- «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2011թ. պետական բյուջեով նախատեսված գիշատիչների գլխաքանակի կարգավորման միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» որոշման նախագիծը.
- «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության նախարարությանը անհատույց վառելիքայտ և գործափայտ հատկացնելու մասին» որոշման նախագիծը.
- «2011թ. համար բնափայտի մթերման հաշվարկային հատատեղը հաստատելու մասին» որոշման նախագիծը.
- «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2005թ. նոյեմբերի 29-ի թիվ 489 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» որոշման նախագիծը.
- «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2008թ. մարտի 18-ի թիվ 235 որոշման մեջ լրացում կատարելու մասին» որոշման նախագիծը.
- «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի բնապահպանության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման կարգը հաստատելու մասին» որոշման նախագիծը.
- «2012թ. համար բնափայտի մթերման հաշվարկային հատատեղը հաստատելու մասին» որոշման նախագիծը.

- «Բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» որոշման նախագիծը.
- «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անտառային ֆոնդում արմատի վրա բնափայտի բացթողնման նվազագույն գները (մեկ խորանարդ մետրի համար) սահմանելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2008թ. մարտի 18-ի թիվ 235 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» որոշման նախագիծը:
Նշված որոշման նախագծերը ընդունվել են ԼՂՀ կառավարության կողմից:

2. Բնական ռեսուրսների կառավարում

Բնական ռեսուրսների կառավարման գործակալությունը, 2011 թ. աշխատանքային գործունեության ծրագրի համաձայն իր առջև դրված նպատակների և խնդիրների լուծման համար, ղեկավարվելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքներով, Կառավարության որոշումներով, այլ իրավական ակտերով և իր կանոնադրությամբ, 2011թ. հաշվետու ժամանակաընթացքում իրականացրել է հետևյալ գործառնությունները.

I. Ջրային ռեսուրսների կառավարման ոլորտում

Տնտեսվարող սուբյեկտների կողմից ջրօգտագործման թույլտվություն ստանալու նպատակով ներկայացված 39 հայտերի հիման վրա, Ջրային օրենսգրքի պահանջներին ջրօգտագործման պայմանների համապատասխանության ստուգման նպատակով, տեղում ուսումնասիրվել է 34 ջրառի օբյեկտ և համապատասխան քննարկման արդյունքում տրամադրվել ջրօգտագործման թույլտվություններ, այդ թվում՝ 3-ը Ստեփանակերտում, 17-ը Ասկերանի, 10-ը Մարտունու, 1-ը Հաղբուքի և 3-ը Քաշաթաղի շրջաններում: Բացի այդ, օրենքով սահմանված կարգով երկարաձգվել է նախկինում տրամադրված 1 ջրօգտագործման թույլտվություն:

Մնացած 5-ը հայտերի հիման վրա անհրաժեշտություն է առաջացել տեղում կատարելու լրացուցիչ ուսումնասիրություններ, որոնք նախատեսվում են կատարել 2012 թվականին:

Ընդամենը՝ 2011 թվականին տրամադրվել է 34 ջրօգտագործման թույլտվություն: Տրամադրված ջրօգտագործման թույլտվությունների դիմաց »Պետական տուրքի մասին« ԼՂՀ օրենքի համաձայն պետրյուջե է մուտքագրվել 340,0 հազ. դրամ:

2011 թվականին կատարված աշխատանքների արդյունքները 2010 թ. ընթացքում կատարվածի համեմատ ներկայացվում են ստորև բերվող աղյուսակում (Աղյուսակ I.1).

N	Աշխատանքների անվանումը	2011 թ. ընթացքում				2010 թ. համապատասխան ժամանակաշրջանում			
		Կատարվել են		Վճարվել է բյուջե		Կատարվել են		Վճարվել է բյուջե	
		Չափի միավ.	Քանակը	Չափի միավ.	Գումար, հազ. դր	Չափի միավ.	Քանակը	Չափի միավ.	Գումար, հազ. դր
1	Ջրօգտագործման թույլտվությունների տրամադրում	հատ	34	դրամ	340.0	հատ	31	դրամ	310.0
2	Ջրօգտագործման թույլտվությունների երկարաձգում	– ” –	1	– ” –	-	– ” –	9	– ” –	-
Ընդամենը՝ մուտքագրվել է պետբյուջե		x	34	դրամ	340.0	x	31	դրամ	310.0

Աղյուսակ I.1-ից հետևում է, որ 2011 թվականին ջրօգտագործման թույլտվությունների քանակը 2010 թվականի համեմատ ավելացել է 3-ով, երկարաձգումների քանակը՝ նվազեցվել 8-ով, իսկ պետական տուրքի մասով մուտքագրումները պետբյուջե 2010 թ. համեմատ ավելացել են 30.0 հազ դրամով:

II. Կենսառեսուրսների կառավարման ոլորտում

1. Ծառահատումների և ծառերի երիտասարդացման թույլտվությունների տրամադրման գործառույթներում

Ստեփանակերտի քաղաքապետարանի, ԼՂՀ շրջվարչակազմերի, գյուղական համայնքների, տարբեր կազմակերպությունների ու քաղաքացիների կողմից ծառահատում և ծառերի երիտասարդացում իրականացնելու նպատակներով ներկայացված 31 հայտերի հիման վրա տեղում կատարվել են դրանց կենսական վիճակների ուսումնասիրություններ, և համապատասխան քննարկումների արդյունքում տրամադրվել 30 գրավոր համաձայնություն: 1 հայտ մերժվել է, օրենքի պահանջներին չհամապատասխանելու պատճառով:

2011 թվականին կատարված աշխատանքների արդյունքները 2010 թ. ընթացքում կատարվածի համեմատ ներկայացվում են ստորև բերվող աղյուսակում (Աղյուսակ II.1).

N	Աշխատանքների անվանումը		2011 թ. ընթացքում			2010 թ. համապատասխան ժամանակաշրջանում		
			Կատարվել են		Մերժվ.	Կատարվել են		Մերժվ.
			Չափի միավոր	Մանակը	Քանակը, (հայտ)	Չափի միավոր	Քանակը	Քանակը, (հայտ)
1 2	Ծառահատումների և ծառերի երիտասարդացման թույլտվությունների տրամադրում	Ընդամենը	հատ	30	x	հատ	27	x
3	Ծառահատումների մերժումներ		x	x	1	x	x	7

Աղյուսակ II.1-ից հետևում է, որ 2011 թվականին ծառահատման և ծառերի երիտասարդացման թույլտվությունների քանակը 2010 թվականի համեմատ ավելացել է 3-ով, իսկ մերժումների քանակը նվազել է 6-ով:

Այս գործառույթների համար մուտքագրումներ պետբյուջե իրավական ակտերով սահմանված չէ:

2. Անտառանյութի հատկացման գործառույթում

ԼՂՀ կառավարության որոշմամբ 2011թ. համար հաստատված 7500 մ³ գործափայտի և 54902 մ³ վառելափայտի մթերման համար տնտեսվարող սուբյեկտների կողմից անտառօգտագործման թույլտվություն ստանալու նպատակով քննարկվել է ֆիզիկական և իրավաբանական անձանց դիմում-գրություններ, որոնց համաձայն մթերվել և իրացվել են 4841մ³ գործափայտ և 72900 մ³ վառելափայտ:

2011թ. ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից մթերված գործափայտի դիմաց պետբյուջե է մուտքագրվել 60880.0 հազ. դրամ, իսկ վառելափայտի դիմաց՝ 104620.0 հազ. դրամ: Բացի այդ, այլ տեսակի անտառանյութերի մթերումներից (թափուկից և այլն) մուտքագրվել է նաև 834.0 հազ դրամ: Ընդամենը՝ պետբյուջե է մուտքագրվել 166334.0 հազ. դրամ:

2011 թվականին կատարված աշխատանքների արդյունքները 2010 թ. ընթացքում կատարվածի համեմատ ներկայացվում են ստորև բերվող աղյուսակում (Աղյուսակ II.2).

N	Աշխատանքների անվանումը	2011 թ. ընթացքում					2010 թ. համապատասխան ժամանակաշրջանում				
		ԼՂՀ կառ. որոշմամբ հաստատված, մ ³	Մթերվել են		Վճարվել է բյուջե		ԼՂՀ կառ. որոշմամբ հաստատված, մ ³	Մթերվել են		Վճարվել է բյուջե	
			Չափի միավ.	Քանակը	Չափի միավ.	Գումար, հազ. դր		Չափի միավ.	Քանակը	Չափի միավ.	Գումար, հազ. դր
1	Տրամադրված թույլտվությունների հիման վրա գործափայտի մթերում	7500	մ ³	4841	դրամ	60880,0	5795	մ ³	3337	դրամ	47578.5
2	Տրամադրված թույլտվությունների հիման վրա վառելիքայտի մթերում	54902	—, —	72900	—, —	104620,0	41965	—, —	61970	—, —	86667.5
3	Տրամադրված թույլտվությունների հիման վրա անտառանյութի այլ տեսակների մթերում	-	—, —	-	„	834,0	-	—, —	-	„	1090.5
Ընդամենը՝ մուտքագրվել է պետբյուջե		x	x	x	x	166334,0	x	x	x	x	135336,5

Աղյուսակ II.2-ից հետևում է, որ 2011 թվականին տրամադրված թույլտվությունների հիման վրա մթերված գործափայտի քանակը 2010 թվականի համեմատ ավելացել է 1504 մ³ - ով, իսկ վառելիքայտի քանակն ավելացել է 10930 մ³ - ով: 2011 թվականին մթերված գործափայտի, վառելիքայտի և այլ տեսակների անտառանյութի դիմաց պետբյուջե մուտքագրված գումարը 2010 թվականի համեմատ ավելացել է 30997,5 հազ. դրամով:

3. »2011 թ. անտառային միջոցառումների ծրագրի« համաձայն անտառային ֆոնդի բնական աճի աջակցման և ընկուզենու տնկիների խնամքի համար »Արցախանտառ« ՊՈԱԿ-ի կողմից 2011թ. կատարված աշխատանքների ստուգումների կատարման գործառնություն

Վարչության պետի 2011 թ. նոյեմբերի 30-ի N^o 1.5-6/722 և դեկտեմբերի 8-ի N^o 1.5-6/739 հանձնարարականների համաձայն 2011 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին կատարվել են »2011 թ. անտառային միջոցառումների ծրագրով« նախատեսված 400հա ընդհանուր

մակերեսով անտառային ֆոնդի բնական աճի աջակցման, 11.2 հա ընդհանուր մակերեսով ընկուզենու տնկիների խնամքի փաստացի կատարված աշխատանքների և «Արցախանտառ» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված կատարողական ակտերի արժանահավատության ստուգումներ:

Ստուգումներն իրականացվել են գործակալության կողմից մշակված «Անտառային ֆոնդի բնական աճի աջակցման և ընկուզենու տնկիների խնամքի համար «Արցախանտառ» ՊՈԱԿ-ի կողմից 2011 թ. կատարված աշխատանքների ստուգումների իրականացման ծրագրով» նախատեսված պատահական ընտրովի տեղամասերում: Ստուգվող պատահական ընտրովի տեղամասերում անտառային ֆոնդի բնական աճի աջակցման աշխատանքներում թերացում չի արձանագրվել, իսկ տնկիների խնամքի միայն 1,0 հա մակերեսով տեղամասում խնամքի աշխատանքներ չեն կատարվել:

Ստուգումների արդյունքներն ամփոփ հաշվետվության տեսքով ներկայացվել են վարչության պետին:

2011 թվականին կատարված ստուգումների արդյունքները 2010 թ. ընթացքում կատարվածի համեմատ ներկայացվում են ստորև բերվող աղյուսակում (Աղյուսակ II.3).

Աղյուսակ II.3

N	Աշխատանքների անվանումը	2011 թ. ընթացքում				2010 թ. համապատասխան ժամանակաշրջանում					
		ԼՂՀ կառ. որոշմամբ հաստատված, հա	Ստուգվել է		Ստուգման արդյունքը		ԼՂՀ կառ. որոշմամբ հաստատված, հա	Ստուգվել է		Ստուգման արդյունքը	
			Անտառալետությունների համապատասխան տեղամասերը, հա (Արցախանտառի կատարողական ակտերի համաձայն)	Բնական աճի աջակցում, հա	Ընկուզենու տնկիների խնամք, հա	Բնական աճի աջակցում, հա		Ընկուզենու տնկիների խնամք, հա	Բավարար-բում է	Չի բավարար-բում	Բավարար-բում է
1	Անտառային ֆոնդի բնական աճի աջակցման ստուգում	400	պատահական ընտրովի տեղամասեր	Բավարար-բում է	Ծրագրի պահանջներից	X	400	պատահական ընտրովի տեղամասեր	380	20 հա բնական աճի աջակցում չի կատ.	X
2	Ընկուզենու տնկիների խնամքի ստուգում	11.2	պատահական ընտրովի տեղամասեր	x	10.2	1 հա խնամք չի կատարվել	11.2	պատահական ընտրովի տեղամասեր	x	9.4	1.8 հա խնամք չի կատարվել

Այս գործառույթների համար մուտքագրումներ պետքի չեն իրավական ակտերով սահմանված չէ:

4. Որսի օբյեկտ հանդիսացող որոշ կենդանատեսակների օգտագործման նպատակով սիրողական և արդյունագործական որսի թույլտվությունների տրամադրման գործառույթում

Որսի օբյեկտ հանդիսացող որոշ կենդանատեսակների որսաշրջանում՝ հայտատուներին, համապատասխան փաստաթղթերի արժանահավատությունը ստուգելուց և ընդունելուց հետո, տրամադրվել է 32 թույլտվություն, այդ թվում՝ 20-ը որսի օբյեկտ հանդիսացող որոշ վայրի կենդանատեսակների որսի, 5-ը՝ ցանցով ձկնորսություն իրականացնելու և 2-ը՝ թարփով ձկնորսություն իրականացնելու համար:

Տրամադրված թույլտվությունների դիմաց պետքի չեն է մուտքագրվել 120,5 հազ. դրամ:

Այս ոլորտի աշխատանքները, կատարվել են տարվա որսաշրջանի ընթացքում և վերահսկվել են:

2011 թվականին կատարված աշխատանքների արդյունքները 2010 թ. ընթացքում կատարվածի համեմատ ներկայացվում են ստորև բերվող աղյուսակում (Աղյուսակ II.4).

Աղյուսակ II.4

N	Աշխատանքների անվանումը	2011 թ. ընթացքում				2010 թ. համապատասխան ժամանակաշրջանում			
		Կատարվել են		Վճարվել է բյուջե		Կատարվել են		Վճարվել է բյուջե	
		Չափի միավ.	Քանակը	Չափի միավ.	Գումար, հազ. դր	Չափի միավ.	Քանակը	Չափի միավ.	Գումար, հազ. դր
1	Որսի օբյեկտ հանդիսացող որոշ վայրի կենդանատեսակների որսի թույլտվությունների տրամադրում	հատ	25	դրամ	33,50	հատ	68	դրամ	165,9
2	Ցանցով ձկնորսություն իրականացնելու թույլտվությունների տրամադրում	կգ _	1700	_ ” _	51,0	կգ _	1950	_ ” _	58,5

3	Թարփով ձկնորսություն իրականացնելու թույլտվությունների տրամադրում	_կգ _	1200	_” _	36,0	_կգ _	700	_” _	21,0
Ընդամենը՝ մուտքագրվել է պետբյուջե		x	X	X	120,5	x	x	x	245.4

Աղյուսակ II.4-ից հետևում է, որ 2011 թվականին որսի օբյեկտ հանդիսացող որոշ կենդանատեսակների օգտագործման նպատակով սիրողական և արդյունագործական որսի համար տրամադրված թույլտվությունների ընդհանուր քանակը 2010 թվականի համեմատ նվազել է 43-ով, իսկ որսի դիմաց մուտքագրումները պետբյուջե՝ 124,9 հազ. դրամով: Որսի դիմաց վճարումների նվազումը պայմանավորված է 2011թ. որսաշրջանի չբացումով:

5. Բնության հատուկ պահպանվող տարածքների բաղկացուցիչ մասը կազմող բնության հուշարձանների ցանկի հաստատում

»Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին« ԼՂՀ օրենքի համաձայն, ցուցակագրվել է ԼՂՀ տարածքի 91 գիտական, բնապատմական և գեղագիտական արժեք ներկայացնող բնության հուշարձան:

Բնության հուշարձանների ցանկը ներկայացվել է ԼՂՀ կառավարություն, որը հաստատվել է ԼՂՀ կառավարության 2011 թ. դեկտեմբերի 30-ի N 1053 որոշման համաձայն:

Այս գործառնությունների համար մուտքագրումներ պետբյուջե իրավական ակտերով սահմանված չէ:

III. Ընդերքի օգտագործման և պահպանության ոլորտում

Օգտակար հանածոների հանքավայրերի շահագործման նպատակ հետապնդող իրավաբանական անձանց դիմումների համաձայն՝ նախքան լիազոր մարմնի կողմից լիցենզիա ստանալը, նախատեսվող գործունեությունների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման տեսանկյունից տեղում կատարվել են 6 ուսումնասիրություններ:

Բոլոր ուսումնասիրությունների արդյունքում տրամադրվել են համապատասխան գրավոր համաձայնություններ՝ բնապահպանական պետական փորձաքննություն իրականացնելու պայմանով, որոնք տարվա ընթացքում իրականացվել են (տես V բաժին):

2011 թվականին կատարված աշխատանքների արդյունքները 2010 թ. ընթացքում կատարվածի համեմատ ներկայացվում են ստորև բերվող աղյուսակում (Աղյուսակ III.2).

Աղյուսակ III.2

N	Աշխատանքների անվանումը	2011 թ. ընթացքում		2010 թ. համապատասխան ժամանակաշրջանում	
		Կատարվել են		Կատարվել են	
		Չափի միավոր	Քանակը	Չափի միավոր	Քանակը
1	Ընդերքի տեղամասերի ուսումնասիրությունների կատարում՝ նախատեսվող գործունեությունների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման տեսանկյունից նախնական համաձայնություններ տրամադրելու համար	հատ	6	հատ	7

Աղյուսակ III.2-ից հետևում է, որ 2011 թվականին օգտակար հանածոների հանքավայրերի շահագործման նպատակով, իրավաբանական անձանց դիմումների համաձայն, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման տեսանկյունից տեղում կատարված ուսումնասիրությունների հիման վրա տրամադրված համաձայնությունների քանակը 2010 թվականի համեմատ պակասել է 1-ով:

Այս գործառույթների համար մուտքագրումներ պետքույժե կատարվում են բնապահպանական պետական փորձաքննության իրականացման պայմանագիրը կնքելուց հետո (տես V բաժին):

IV. Հողերի կառավարման ոլորտում

ԼՂՀ տարբեր շրջանների վարչակազմերի և համայնքների ղեկավարների դիմումների համաձայն, հողերի նպատակային և գործառնական նշանակությունները փոփոխելու նպատակով, նախատեսվող գործունեությունների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման տեսանկյունից ԼՂՀ տարբեր շրջաններում կատարվել են 64 հողատարածքների ուսումնասիրություններ, որոնցից 8-ին՝ ԼՂՀ կառավարության 2005թ. փետրվարի 28-ի »Հողերի նպատակային նշանակության (կատեգորիայի) փոփոխման

կարգը սահմանելու մասին» N85 որոշման պահանջներին չհամապատասխանելու պատճառով ընթացք չեն տրվել:

Ուսումնասիրությունների արդյունքում տրամադրվել են հողատեսքերի փոփոխման 56 համապատասխան գրավոր համաձայնություններ՝ բնապահպանական պետական փորձաքննություն իրականացնելու պայմանով:

2011 թվականին կատարված աշխատանքների արդյունքները 2010 թ. ընթացքում կատարվածի համեմատ ներկայացվում են ստորև բերվող աղյուսակում (Աղյուսակ IV.1).

Աղյուսակ IV.1

N	Աշխատանքների անվանումը	2011 թ. ընթացքում		2010 թ. համապատասխան ժամանակաշրջանում	
		Կատարվել են		Կատարվել են	
		Չափի միավոր	Քանակը	Չափի միավոր	Քանակը
1	Հողերի նպատակային և գործառնական նշանակությունները փոփոխելու նպատակով տեղում ուսումնասիրությունների կատարում՝ նախատեսվող գործունեությունների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման տեսանկյունից նախնական համաձայնություններ տրամադրելու համար	հատ	56	հատ	42

Աղյուսակ IV.1-ից հետևում է, որ 2011 թվականին հողերի նպատակային և գործառնական նշանակությունները փոփոխելու նպատակով ԼՂՀ տարբեր շրջանների վարչակազմերի և համայնքների ղեկավարների դիմումների համաձայն, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման տեսանկյունից տեղում կատարված ուսումնասիրությունների հիման վրա տրամադրված համաձայնությունների քանակը 2010 թվականի համեմատ ավելացվել է 14-ով:

Այս գործառնությունների համար մուտքագրումներ պետք է կատարվում են բնապահպանական պետական փորձաքննության իրականացման պայմանագիրը կնքելուց հետո (տես V բաժին):

V. Բնապահպանական պետական փորձաքննության ոլորտում

Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննություն իրականացնելու նպատակով տնտեսվարող սուբյեկտների կողմից ներկայացվել են 37 հայտ և կնքվել պայմանագրեր, որոնցից փորձաքննության են ենթարկվել 17-ը, իսկ 20-ը գտնվում է ընթացքի մեջ:

Ընդամենը՝ բնապահպանական պետական փորձաքննության իրականացման համար պետական բյուջե է մուտքագրվել 2526,200 հազ. դրամ:

2011 թվականին կատարված աշխատանքների արդյունքները 2010 թ. ընթացքում կատարվածի համեմատ ներկայացվում են ստորև բերվող աղյուսակում (Աղյուսակ V.1).

Աղյուսակ V.1

N	Աշխատանքների անվանումը	2011 թ. ընթացքում					2010 թ. համապատասխան ժամանակաշրջանում				
		Ներկայացված հայտերի և կնքված պայմանագրերի քանակը	Իրականացվել են		Վճարվել է բյուջե		Ներկայացված հայտերի և կնքված պայմանագրերի քանակը	Իրականացվել են		Վճարվել է բյուջե	
			Չափի միավ.	Քանակը	Չափի միավ.	Գումար, հազ. դր		Չափի միավ.	Քանակը	Չափի միավ.	Գումար, հազ. դր
1	Ներկայացվել է բնապահպանական պետական փորձաքննություն իրականացնելու հայտ	37	x	x	x	x	87	x	x	x	x
2	Կնքվել է բնապահպանական պետական փորձաքննություն իրականացնելու պայմանագիր	37	x	x	x	2526,2	87	x	x	x	8848,0
3	Իրականացվել է բնապահպանական պետական փորձաքննություն	x	հատ	17	դրամ		X	հատ	57	դրամ	7321.4
	Ընդամենը՝ մուտքագրվել է պետբյուջե	x	x	x	դրամ	2526,2	X	x	x	դրամ	8848,0

Աղյուսակ V.1-ից հետևում է, որ 2011 թվականին բնապահպանական պետական փորձաքննություն իրականացնելու նպատակով տնտեսվարող սուբյեկտների հետ կնքված պայմանագրերի քանակը 2010 թվականի համեմատ պակասել է 50-ով, իսկ իրականացված փորձաքննությունների քանակը՝ 40-ով: 2011 թվականին իրականացված փորձաքննությունների դիմաց մուտքագրումները պետբյուջե 2011 թվականի համեմատ պակասել են 6321,8 հազ. դրամով

6. Բնապահպանական վերահսկողություն

ԼՂՀ ԿԱ շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչության աշխատակազմի բնապահպանական պետական տեսչությունը, ղեկավարվելով ոլորտին վերաբերող օրենսդրական և ենթօրենսդրական ակտերով, իր կանոնադրության և գործունեության ծրագրի համաձայն, հաշվետու ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ գործառնությունները.

Ըստ կանոնադրության՝ բնապահպանական պետական տեսչությանը վերապահված 9 գործառնությունից իրականացվել է 6 գործառնությ:

Հաշվետու ժամանակահատվածում, ըստ »Բնապահպանական վերահսկողության մասին« ԼՂՀ օրենքի 26-րդ և 27-րդ հոդվածների պահանջների, գրավոր հանձնարարականներով հանրապետության տարածքում բնապահպանական պետական տեսչության կողմից կատարվել են 69 ստուգայցեր՝

Բնապահպանական պետական տեսչության կողմից բանավոր և գրավոր հանձնարարականներով ստուգայցերի ընթացքում արձանագրվել և օրենսդրությամբ սահմանված կարգով ընթացքավորվել են 96 տարբեր տեսակի իրավախախտումներ, որոնց հաշվարկված վնասի չափը կազմել է 30364.0 հազ. դրամ:

Կենդանական և բուսական աշխարհի օգտագործում և պահպանության ոլորտում՝

• Ապօրինի ծառահատման փաստով հայտնաբերվել և արձանագրվել է 22 իրավախախտում, որոնք կատարվել են 22 քաղաքացիների կողմից:

1. Կազմված 22 արձանագրություններով հաշվարկված վնասի չափը կազմել է 28761.0 հազ. դրամ, մուծվել է պետ.բյուջե 1007.0 հազ. դրամ, չմուծված 27754.0հազ. դրամը ընթացքի մեջ է գանձելու նպատակով

2. Ոստիկանություն է ուղարկվել 9 վարույթ՝ 28664.0 հազ. դրամի չափով ընթացքավորելու նպատակով, ուղարկված 9 վարույթից 3-ը մերժվել է՝ 26811.0 հազ. դրամի չափով:

3. ԼՂՀ ՎԻՎ օրենսգրքի 66 հոդվածով վարչական պատասխանատվության է ենթարկվել 1 քաղաքացի 50.0 հազ. դրամի չափով:

4. Դատարան է ուղարկվել 2 գործ՝ 800.0 հազ. դրամի չափով, որից 50.0 հազ. դրամը վարչական տուգանք է:

Ապօրինի որսորդության փաստով հայտնաբերվել և արձանագրվել է 7 իրավախախտում, որոնք կատարվել են 14 քաղաքացիների կողմից:

1. Կազմված 7 արձանագրություններով հաշվարկված վնասի չափը կազմել է 766.0 հազ. դրամ,

2. Ոստիկանություն է ուղարկվել 5 գործ 766.0 հազ. դրամ չափով, կամավոր պետբյուջե է մուծվել 508.0 հազ.:

3. Առգրավված որսամթերքները բնապահպանական պետական տեսչության կողմից հանձնվել են ԼՂՀ Ոստիկանություն.

ա) նապաստակ 2 հատ

բ) այծյամ 2 հատ

4. ԼՂՀ ՎԻՎ օրենսգրքի 88-րդ հոդվածով վարչական պատասխանատվության է ենթարկվել 3 քաղաքացի՝ 130.0 հազ. դրամի չափով, որից կամավոր մուծվել է պետբյուջե 80.0 հազ. դրամ:

5. Դատարան է ուղարկվել 1 գործ՝ 300.0 հազ. դրամի չափով, որից 50.0 հազ. դրամը վարչական տուգանք է: Ուղարկված գործը մերժվել է :

• Ապօրինի ձկնորսության փաստով հայտնաբերվել և արձանագրվել է 8 իրավախախտում, որոնք կատարվել են 11 քաղաքացիների կողմից:

1) Կազմված 8 արձանագրություններով հաշվարկված վնասի չափը կազմել է 837.0 հազ. դրամ, որից կամավոր պետբյուջե մուծվել է 444.0 հազ. դրամ:

2) Ոստիկանություն է ուղարկվել 2 գործ 108.0 հազ. դրամի չափով ընթացքավորելու նպատակով:

3) ԼՂՀ ՎԻՎՕ-ի 89-րդ հոդվածով վարչական պատասխանատվության է ենթարկվել 5 քաղաքացի 250.0 հազ. դրամի չափով, որը կամավոր մուծվել է 250.0 հազ. դրամ:

Ջրային ռեսուրսների օգտագործման և պահպանության ոլորտում՝

Ջրօգտագործման թույլտվության ճշտության փաստի առթիվ ստուգվել է 44 կազմակերպություն, կազմակերպություններում իրավախախտում չի հայտնաբերվել և կազմված արձանագրությունները ընդունվել են ի գիտություն:

Բնապահպանական պետական փորձաքննության ոլորտում՝

- Բնապահպանական պետական փորձաքննության փաստով հայտնաբերվել և արձանագրվել է 1 դեպք, որը կատարվել է 1 կազմակերպության կողմից:

1.ԼՂՀ ՎԻՎՕ-ի 94¹-րդ հոդվածի համաձայն վարչական պատասխանատվության է ենթարկվել 1 կազմակերպություն 100.0 հազ.դրամի չափով, որից կամավոր պետբյուջե է մուծվել 100.0 հազ. դրամ:

Ըստ «Բնապահպանական վերահսկողության մասին» ԼՂՀ օրենքի 26-րդ հոդվածի առաջին կետի՝ 43 կազմակերպությունների տրվել է նախազգուշացում բնապահպանական պետական փորձաքննություն չիրականացնելու համար:

Բնապահպանական և բնօգտագործման վճարների ոլորտում՝

Բնապահպանական և բնօգտագործման վճարների հաշվարկ-հաշվետվությունների ճշտության նպատակով 2011թ. ստուգվել են ԼՂՀ-ում գործող 14 հիմնարկ ձեռնարկություններ, որից 14 կազմակերպության նկատմամբ կազմվել է արձանագրություն,

Կազմված 14 արձանագրություններով հաշվարկված պակաս մուծված վճարների չափը կազմել է 25.0 հազ. դրամ, որը կամավոր մուծվել է պետբյուջե, ԼՂՀ ՎԻՎՕ օրենսգրքի 63² և 169⁴ հոդվածներով վարչական պատասխանատվության են ենթարկվել 2 կազմակերպություններ՝ 110.0 հազ. դրամի չափով, որից կամավոր պետբյուջե է մուծվել 110.0 հազ. դրամ:

Բնապահպանական և բնօգտագործման վճարների հաշվարկ հաշվետվություն են ներկայացրել 79 հիմնարկ-ձեռնարկություն 2011թ. կտրվածքով: Հաշվարկային բնավճարները կազմել են 53201.718 հազ. դրամ, որից՝

բնապահպանական վճարներ՝ 19291.22 հազ. դրամ

բնօգտագործման վճարները՝ 33910.498 հազ. դրամ

Բնապահպանական վարչական վիճագրության ոլորտ

Համաձայն «Պետական վիճակագրության մասին» ԼՂՀ օրենքի, ԼՂՀ վիճակագրության պետական խորհրդի կողմից հաստատված «Պետական վիճակագրական աշխատանքների ծրագրի» և «Վիճակագրական տեղեկությունների ներկայացման» կարգի՝ բնապահպանական վարչական վիճակագրության վարման և հաշվետվությունների ներկայացման կարգը պահպանվում և նշված ժամկետներում ներկայացվում է ԼՂՀ ազգային վիճակագրական ծառայություն:

Գիշատիչների գլխաքանակի կարգավորման ոլորտում

ԼՂՀ Կառավարության 2011թ. փետրվարի 15-ի թիվ 68-Ա, 2011թ. դեկտեմբերի 12-ի թիվ 939-Ա որոշումներով կատարվել են 216 գլուխ գայլի պարզկատրման ուղղությամբ փաստաթղթերի ձևակերպման աշխատանքներ:

Ստեփանակերտ	13 գայլ
Ասկերանի շրջան	53 գայլ
Մարտակերտի շրջան	57 գայլ
Մարտունու շրջան	29 գայլ
Հաղբուքի շրջան	21 գայլ
Շուշիի շրջան	5 գայլ
Քաշաթաղի շրջան	28 գայլ
Շահումյանի շրջան	10 գայլ

Ա Մ Փ Ո Փ Ո Ւ Մ

Բնական ռեսուրսների կառավարման ոլորտում

Գործակալության գործառույթներով 2011 թ. ընթացքում ընդամենը պետբյուջե է մուտքագրվել 169320.7 հազ. դրամ՝, որը 2010 թ. մուտքագրված 143213.3 հազ. դրամից ավելի է 26107.4 հազ. դրամով, կամ 2011 թ. ընթացքում կատարված մուտքագրումները 1.2 անգամ ավելի են 2010 թ. ընթացքում կատարված մուտքագրումներից:

Բնապահպանական վերահսկողության ոլորտում

Կատարված աշխատանքների ամփոփումից հետևում է, որ

- ա) 2011թ. ստուգայցների քանակը 2010թ. համեմատ ավելացել է 20-ով կամ 47.6%,
- բ) 2011թ. իրավախախտումների քանակը 2010թ. համեմատ ավելացել է 23-ով կամ 30.8%,
- գ) 2011թ. վնասի չափը 2010թ. համեմատ նվազել է 38796.8 հազ. դրամով կամ 55.4%-ով,
- դ) 2011թ. վարչական տուգանքը 2010թ. համեմատ նվազել է 500.0 հազ. դրամի չափով կամ 41.8.0 %: